ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Աննա Վարդապետյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2019թ. հուլիսի 15-ից 19-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի հերթական 58-րդ լիագումար նիստին:

Քննարկված թեմաները՝ Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման առնչությամբ Եվրոպական միության պրակտիկային և առկա խնդիրներին, ակտիվների վերադարձի շրջանակներում առկա խոչընդոտներին, ինչպես նաև այդ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքներին առնչվող հարցեր

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ Նիստի ընթացքում ներկայացվել է սույն թվականի մարտի 24-26-ը Թել Ավիվում կայացած՝ ՖԱԹՖ/ՄԱՆԻՎԱԼփորձագետների հանդիպման արդյունքում կազմված զեկույցը, ՄԱՆԻՎԱԼԻ քարտուղարության փետրվարի և ՖԱԹՖ-ի հունիսի հանդիպումների արդյունքում կազմված զեկույցը, Ռումինիայի (4-րդ ընթացիկ գնահատում), Խորվաթիայի (4-րդ ընթացիկ գնահատում) և Ման կղզու (5-րդ ընթացիկ գնահատում) զեկույցները՝ համապատասխանաբար առաջին, երկրորդ և առաջին քայլերին համապատասխանեցման գործընթացների վերաբերյալ, Լիտվայի

հարկային համակարգի առանձնահատկությունների վերաբերյալ զեկույցը: Քննարկվել է ՄԱՆԻՎԱԼԻ 2019-2022 թվականների ռազմավարությունը, զեկույցներով հանդես են եկել EBRD, EGMOND Group, EAG, FATF, GIFCS, IMF, UNODC և Համաշխարհային բանկի ներկայացուցիչները: Քննարկվել է Մոլդովայի 5-րդ գնահատման զեկույցի նախագիծը, անցկացվել են ՄԱՆԻՎԱԼԻ նախագահության ընտրություններ: Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման հետ առնչվող թեմաներով զեկուցումներ են ներկայացրել դատավոր Մայքլ Հոփմեյերը (Անգլիա), Eurojust-ում Լյուքսեմբուրգի ազգային անդամ Օլիվիեր Լեներտը, FATF-ի քարտուղարության ներկայացուցիչ Նեյլ Էվերիտը: Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ առնչվող թեմաներով զեկուցումներ են ներկայացրել RUSI-ի ներկայացուցչի, FATF-ի և ՄԱՆԻՎԱԼԻ քրտուղարությունների ներկայացուցիչների կողմից:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Աննա Վարդապետյան